# «ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N«ՄՄՔԲԿ-ԳՀ ԱՊՁԲ-20/3□4»

ք.Քաջարան «19»փետրվար 2020թ.

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Ղահրամանյանի, որը գործում «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արմենֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Լ□Գևորգյանի, որը գործում է «Արմենֆարմ»ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության

չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է`**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Վաճառողին մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի`**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է`**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը` պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք` պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված

ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 291600 (երկու հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային

օրվանից հաշված 5աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակագումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա,սակայն չվճարված գումարի 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա,ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ կողմերի հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

ազդեցությամբ
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների դեպք սահմանում է
պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է
Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել
միչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Վաճառողի
առաջարկության դեպքում, պայմանով, որ Գնորդի
մոտչի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի
առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի
սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց
առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով
սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է
երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ
ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:
8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի
(Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած
վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ
պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման
շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող
պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման
դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն
ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող
պարտավորությունների կատարման հետ կապված
հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ
կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց
համար պատասխանատու է Վաճառողը:
8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-
թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ
ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ
համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական
հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի
կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ
ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ
համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական
հատկացումների նվազեցումը:
8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն
ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին
ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող
ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու
մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման
ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը,
վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը
սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի
լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու
օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային
փոստին:
8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում
են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք
չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.10 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու
օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ
յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են
պայմանագրի անբաժանելի մասը:
8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների
նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության
իրավունքը:
**8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարում**
**իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների**
**առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան**
**համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթ**
**այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այ**

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[24]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրեն Ա. Ղահրամանյան
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Արմենֆարմ » ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 42/13
Բանկ՝«Էվոկաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1660004093580100
ՀՎՀՀ 00039741
Տնօրեն Լ. Գևորգյան
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

---

[24] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ... ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման ... դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված
«19» փետրվար 2020թ. կնքված
ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3□4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը* | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 132 | 33651189/501 | հակազանգրենոզ շիճուկ` Միկրոգեն | Միկրոգեն | Պրեպարատն իրենից ներկայացնում է ձիու արյան շիճուկի սպիտակուցային ֆրակցիա` հիպերիմունիզացված գազային գանգրենայի հարուցիչների տոքսիններ կամ անատոքսիններ: Բաղադրությունը-Սրվակը պարունակում է 30000ՄՄ 1 պրոֆիլակտիկ դոզա, որը համապատասխանում է 30000ՄՄ ակտիվությամբ հակազանգրենոզ հակաթույների: Նկարագրությունը-Թափանցիկ, անգույն կամ թույլ դեղնավուն երանգով առանց նստվածքի հեղուկ է: Փաթեթավորման ձևը-տուփը պարունակում է 1 կոմպլեկտ(ձիու շիճուկ մաքրված, նոսրացված 1 :100 հարաբերությամբ և 1 սրվակ հակազանգրենոզ շիճուկ) : Պահպանման եղանակը-պահել 2-8 C-ի պայմաններում, երեխաներից հեռու տեղում | հատ | 132000 | 132000 | 1 | Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից` ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով | Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ` որոնք ըստ կարիքի կարող են նվազել | 2020 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո` 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի |

«ԱՐՄԵՆՖԱՐՄ» ՍՊԸ ООО "АРМЕНФАРМ" 00039741 ՀՀ Երևան

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 133 | 33651189/ 502 | հակաբռտուլինային շիճուկ Ե տիպի | Միկրոգեն | Հակաբոտուլինային E տիպի 10000 մմ սրվակով լուծույթ ներարկման համար, դեղերի պիտանելիության ժամկետը հանձման պահին 2 տարուց ոչ պակաս, /ՀՀ կառ. 2 մայիսի 2013թ-ի թիվ 502-Ն որոշման/ և <> ՀՀ ԱՆ 09,09,2010թ-ի N17 հրամանի պահանջներին համաձայն /պահպանումը և տեղափոխումը 5+/-3/ աստիճան C, չոր, լույսից պահպանված: | հ ատ | 6000 | 12000 | 2 | | | համաձայնությամբ մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում մինչև 31 . 12 . 2020թ |
| 134 | 33651189/ 503 | Փայտացման անատոքսին | Սերում | 1 սրվակը պարունակում է 0.5մլ հակափայտացման անատոքսին յուրաքանչյուրում պատվաստումների 1-ական դեղաչափով: Տուփը պարունակում է 10 սրվակ: Պահպանման եղանակը-պահել չոր,մութ տեղում, 4-8°C-ի պայմաններում | հ ատ | 600 | 12000 | 20 | | | |
| 136 | 33651191/ 501 | հակաբռտուլինային շիճուկ Բ տիպի | Միկրոգեն | Հակաբոտուլինային B տիպի 5000 մմ սրվակով լուծույթ ներարկման համար, դեղերի պիտանելիության ժամկետը հանձման պահին 2 տարուց ոչ պակաս, /ՀՀ կառ. 2 մայիսի 2013թ-ի թիվ 502-Ն որոշման/ և <> ՀՀ ԱՆ 09,09,2010թ-ի N17 հրամանի պահանջներին համաձայն /պահպանումը և տեղափոխումը 5+/-3/ աստիճան C, չոր, լույսից պահպանված: | հ ատ | 4800 | 9600 | 2 | | | |
| 137 | 33651191/ 502 | հակաբռտուլինային շիճուկ Ա տիպի | Միկրոգեն | Հակաբոտուլինային A տիպի սիճուկ 10000 մմ սրվակով լուծույթ ներարկման համար, դեղերի պիտանելիության ժամկետը հանձման պահին 2 տարուց | հ ատ | 3000 | 6000 | 2 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ոչ պակաս /ՀՀ կառ. 2 մայիսի 2013թ-ի թիվ 502-Ն որոշման/ և <> ՀՀ ԱՆ 09,09,2010թ-ի N17 հրամանի պահանջներին համաձայն /պահպանումը և տեղափոխումը 5+/-3/ աստիճան C, չոր, լույսից պահպանված: | | | | | | | |
| 138 | 33651192/ 501 | օձի հակաթույն 10 մլ | Ուզբիոֆարմ | Հակաբոտուլինային A տիպի սիճուկ 10000 մմ սրվակով լուծույթ ներարկման համար, դեղերի պիտանելիության ժամկետը հանձման պահին 2 տարուց ոչ պակաս /ՀՀ կառ. 2 մայիսի 2013թ-ի թիվ 502-Ն որոշման/ և <> ՀՀ ԱՆ 09,09,2010թ-ի N17 հրամանի պահանջներին համաձայն /պահպանումը և տեղափոխումը 5+/-3/ աստիճան C, չոր, լույսից պահպանված: | հատ | 120000 | 120000 | 1 | | | |

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել :**

***Ծանոթություն**

**Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:**

***Որակի սերտիֆիկատների առկայություն**

*Ծանոթություն – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, կետ 5)

* Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հասցեով, աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00: Մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է աշխատանքային օրերին և աշխատանքային օրվա ընթացքում՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից Գնորդի պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝

****Ապրանքների մատակարարումը Գնորդից պատվերը ստանալուց հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան :**

**Մատակարարման ժամկետը, պետք է կողմից պատվիրված քանակին, առաջին փուլի մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանագրով, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակցի**

* Ապրանքի մատակարարման 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակցի սահմանվի առնվազն պայմանն ուժի մեջ մտնելու օրը: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան պարտականությունների կատարման ավելի կարճ ժամկետում: Մատակարարման ֆիրմային անվանման ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման և համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: «ապրանքային նշանը, մակնիշը և տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանը, մակնիշը և ... չի նախատեսվում ... ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը

արտադրողի անվանումը »սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «Արմենֆարմ » ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1 | Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 42/13 |
| Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ | Բանկ՝ «Էվոկաբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 1570025402170100 | Հ/Հ 1660004093580100 |
| ՀՎՀՀ 09417527 | ՀՎՀՀ 00039741 |
| Տնօրեն Ա. Ղահրամանյան | Տնօրեն Լ. Գևորգյան |
| ------------------------- | ------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N2
«17» փետրվար 2020թ. կնքված
ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/34 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 132 | 33651189/501 | հակազանգրենոզ շիճուկ` Միկրոգեն | | | | | | | | | | | | | |
| 133 | 33651189/502 | հակաբոտուլինային շիճուկ Ե տիպի | | | | | | | | | | | | | |
| 134 | 33651189/503 | Փայտացման անատոքսին | | | | | | | | | | | | | |
| 136 | 33651191/501 | հակաբոտուլինային շիճուկ Բ տիպի | | | | | | | | | | | | | |
| 137 | 33651191/502 | հակաբոտուլինային շիճուկ Ա տիպի | | | | | | | | | | | | | |
| 138 | 33651192/501 | օձի հակաթույն 10 մլ | | | | | | | | | | | | | |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:

**Իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «Արմենֆարմ» ՍՊԸ |
| Հասցե` ք.Քաջարան, Բակունցի 1 | Հասցե` ք. Երևան, Չարենցի 42/13 |
| Բանկ` «Ամերիաբանկ»ՓԲԸ | Բանկ`«Էվոկաբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 1570025402170100 | Հ/Հ 1660004093580100 |
| ՀՎՀՀ 09417527 | ՀՎՀՀ 00039741 |
| Տնօրեն Ա. Ղահրամանյան | Տնօրեն Լ. Գևորգյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |